



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒՄԱՐԶՊԵՏ**

Կ Ա Ր Գ Ա Դ Ի Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2 փետրվարի 2018թ. թիվ 10

**Ն. ՔՈՉԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 223 հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.17 կետի «ա» ենթակետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի մոտ 30.01.2018թ. կայացած խորհրդակցության թիվ 1-2018 արձանագրության 1-ին կետի ա/ ենթակետով տրված հանձնարարականը, հաշվի առնելով մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի զեկուցագիրը և Ն.Քոչարյանի բացատրությունը՝

Կ ա Ր Գ Ա Դ Ի Ր ՈՒ Մ Ե Մ.

1. Աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու, կատարողական կարգապահությունը խախտելու համար «Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի տնօրեն Նվարդ Լևոնի Քոչարյանի նկատմամբ կիրառել «նկատողություն» կարգապահական տույժը:

2. Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ս.Լամբարյանին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով սույն վարչական ակտը եռօրյա ժամկետում հանձնել հասցեատիրոջը՝ ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով:

ՀՀ ԼՈՒՈՒՄԱՐԶՊԵՏ

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2018թ. փետրվարի 2
ք.Վանաձոր